


Երեւոյն



Նոյեմբերի 12-ին Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում տեղի ունեցավ բանաստեղծ Ռոբերտ Եսայանի «Յրեշտակի ինքնագիրը» ժողովածուի շնորհանդեսը: Ներկա էին Շիրակ աշխարհի գրողներ, մտավորականներ, բանաստեղծի արվեստի երկրպագուներ, ուսանողներ: Յերեւույթի ընթացքում հնչեցին Ռոբերտ Եսայան մարդու և բանաստեղծի մասին գնահատանքի խոսքեր. ելույթներով հանդես եկան բանաստեղծ, ՀՀ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, գրքի խմբագիր Անդրանիկ Կարապետյանը, բանաստեղծի գրչընկերները՝ Շնորհիկ Շահինյանը, Սոնա Անտոնյանը, Մնացական Մուրադյանը, Լուսինե Աղաջանյանը, «Դպիր» հրատարակչության հիմնադիր տնօրեն Յուլիա Կարապետյանը, գրականագիտական վերլուծությամբ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Մարտիրոսյանը: Հանդիպումը ոգեղեն խոսքով անցկացրեց բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը: Օրը հազեցած էր նաև բուհերի ուսանողների անկեղծ ասմունքով ու ոգևորությամբ:

Բառերը հոգու տեսադաշտում...
/Ռ. Եսայան, «Յրեշտակի ինքնագիրը»/

«Հոգու տեսադաշտ դառնալու համար // բառերը երկար ճամփա են անցնում // հաղթահարելով մեկուսարանը ոգու և արյան // կանխորոշում են մի նոր ժամանակ և տարածություն»,- ասում է Ռոբերտ Եսայանը, և «Սահմանագիծը, որն ընդգծվում է որպես բանաստեղծական պատկեր, տագնապ է, որի մեջ ապրում և ստեղծագործում է արվեստագետը»:

Իհարկե, ամենևին էլ ոչ պատահականորեն Ռոբերտ Եսայան բանաստեղծի և այս գրքի վերաբերյալ էջերը իր իսկ տողերով են նրա մի հարցազրույցից:

Բառերը հոգու տեսադաշտում...

Մեր կողքին Բանաստեղծն է և իր Արցախը՝ աշխարհում հարազատ բնօրրանը, բույնն իր երագների ու ծննդյան:

«Արահետներդ ցավից արծակված նետեր են ոխի, // պատմագիր քարեր, որ գլորվում են վիհը մեղկության, // ընդվզող արյան կոչը լեռներում չի դառնա մոխիր, // հողից համբառնող ոգու երկինքը ծայրն է փրկության»:

Նա է պայքարի պատրաստ ոգով, ամենահաս Գյումրի ուղեկցությամբ, որ «երկնակրիակ շնչառությունն է» բառի, և ամենից ամենակարևորը՝ հայի համար՝ բանաստեղծի շուրթերից. «Թեև ճանապարհս անցնում է անվերջ գոհասեղանով, ուսերով բերում են արևածագն Արցախի...»:

Իսկ թվագրված-ժամանակագրված է «քաղաք Գյումրի»:

Ձգայուն ժամանակը սահմաններ չի ճանաչում, և Հույսը տարածության կամ այդ սահմանների հեռավորության հետ բնավ աղերսներ չունի: Ապա ասես ժամանակից ու տարածությունից դուրս գրքում էջվում են օրերը՝ Շուշի և Գյումրի՝ առաջին հայացքից գուցե պարզ, բայց խորքում ամեն ինչի մասին տող առ տող սարսուռների հերթազարկությամբ: «Շուշի ի՞նչ քաղաք // և ունայնության աչքերում վառվող // երկու մոմ- երկու // բառ կամ խնդություն // Սուրբ եկեղեցու լուռ հաղորդություն»:

Շուշիից Գյումրի, իսկ կապող օղակը, որ այս պարագայում բանաստեղծության առումով նաև ու առաջին հերթին փրկողական է նրա, ինքը՝ մեծն բանաստեղծությունն է: Ասվածի վկայությունը նրա տողերն են, որտեղ էլ նշմարվում է գրողի՝ «ցավի սահմանը»: Իսկ «Ո՞վ է որոշել սահմանը ցավի...», ցավ, որի լույսից բանաստեղծը իսկապես երագներ է քանում: «Ցավից մի քայլ վար, ցավից մի քայլ վեր- չկա խաղաղ վայր»:

Հույսի ու ցավի մեջտեղում խորխորատից մինչև հառնումը Լուսինի ինքնատիպ անչափ և անկրկնելի: Անշուշտ, ցավի աղբյուր-ակը պատերազմն է՝ իր հետևանքներով, և Եսայանական գրիչը կարող էր այսքան ցավաշատ ու այսքան գեղարվեստորեն ներկայացնել սեփական մաշկով զգացած ու ապրած իրականությունը, ներկայացնել սեփական լռության և ճիչի գունապակով, որ միով բանիվ նրա բանաստեղծական աշխարհն է: Եվ ցավն ամենուր է, աղոթքներից մինչև լույսի ակունք, ասել է՝ հոգու բոլոր նրբագույներով բանաստեղծը

ասես տոնում է ցավի ծնունդն ու մկրտությունը՝ ընդգծելով նույն ցավի անընդգրկելի սահմանները՝ բյուրեղ առ բյուրեղ:

«Աշխարհի վերջին ճգնաժամի պես մեկն աղոթում է խցում իմ մաշկի...»,- ահա կրկին նրա գտնված բառերի, իրական աշխարհը: Եվ ուրիշ ո՞վ, եթե ոչ նույն ինքը՝ բանաստեղծը կարող է սեփական բառերով արժևորել սեփական բառերը. «Բառը բանաստեղծի համար մերթ աղոթքի խորան է, մերթ պայքարի ու մաքառման խրամատ»,- վկայում է Ռոբերտ Եսայանը:

«Մի աստղ իմ միջով վերադառնում է: Ես նրա երկինքն եմ, իսկ ինքն իմ հոգուց բխող առաջին բառը: ...Ինձնից ազատվել են տողերս՝ ապրելով նոր կյանք... Ցավ է անջատումը»:

«Քառածայն պատարագ», և աղոթք խնկարույր, հավատի, հույսի ու «գալիքի նուռ»՝ կորզված այսօր, իսկ գերակշռողը հավատն է իհարկե:

Ուրեմն՝ մի կողմից՝ բանաստեղծն ու իր մեծարժեք պատկերներին ծնունդ տվող բառերը, մյուս կողմից՝ բանաստեղծն ու իր ցավը, մեծ հաշվով՝ հայի ցավը՝ այսօրեական, ցավը: Քնարական հերոսը ներհյուսված է հայրենի ջղերին՝ երկիր Արցախին. «Գիտեմ- // դրախտն հիմա // երկնքում է // և Արցախում // և մտքերիս սպիտակ // պատերով են վեր բարձրանում // մրջյունները տեսնանքներին // գուցե մի օր հասնեն էլքին // տիեզերքի // հասնեն հեմց այս բառով- // Արցախ»:

Ասվածի ամբողջացումը կրկին նրա տողերն են ամայության լուռ ու ճշացող վկայները՝ «Ակամա ուղեկիցը» բանաստեղծությամբ. «...Ես քայլում էի իմ ետևից // (և տագնապ էր փողոցը) // իսկ շունը վազում էր // (աննպատակ, մտամուրթ) // իր մեկնակության տարածության մեջ // և ուղեծիրում իր անախ Տեմոյի: // Վագր՝ էր աշխարհի բողոքն ու խիղճը»:

Բայց և՛ «Կբարձրանա նորից անտառը վրեժի, // և կխոսի հողը փոթորիկով ոգու»: տողերը գրված են Շուշիի պարսպին ուժի ու հզորության պարիսպ իրական և բանաստեղծական:

Նույն հերոսի ոգու և ուժի մարմնացումն է «Ռեքվիեմ» պոեմը՝ «...Ելնում են հողաթմբից ծաղիկներ // Ոսկորի...» բնաբանով: Գործ, որ, սակայն, միևնույն ժամանակ ամրապինդ հավատի ու չմարող հույսի կառույց-պատումն է՝ հույժ լավատեսական վերջա-

բանով, «պատմության ճիչից արթնացած երագ»՝ Անհունի կանչ Հայաստանին ծնված երգը»:

Մեր, հիշողություն, ցավ, ծնունդ բառի, բառը՝ հաղորդության միջոց, աղոթք ու պատարագ, և իհարկե պատկերները՝ նրա՝ ինքնատիպ ու յուրօրինակ:

«Երբ բռնում են ձեռքը // և համբուրում երկնքի շնչառությունը // քո զգվանքներից ձկներ են ցայտում // գետի մեջ հույզի...»:

«...մի ծիտ ցուր է խմում // ափից հրեշտակի»:

«Ինքս իմ հավատի միակ բնակիչն եմ... // Վանդակն ինքն իրենից դուրս է, // Թռչունն ինքն իրենից դուրս է... // և թևավորվում է հիշողությունը լույսի»:

Ընդամենը մի քանի օրինակներ, և ակնհայտ է Եսայանական պատկերաստեղծման ինքնատիպությունը, պատկերներ, որոնք ընդգրկում են ամբողջը՝ երկրից երկինք՝ տիեզերահուն ու տիեզերաչափ և դուրս այդ չափումներից էլ, ասել է՝ ներսում ինքն իրենից դուրս այդ վանդակում:

«Ինքնահաղթահարման ճիչերից // կարմրում էին գագաթները հույսի, // տագնապի հագուստը պատռվում էր // ամենաթեժ կետում...»:

Բանաստեղծություն, որտեղ ներքին երկու «ես»-ի պայքարը, սիրո դրսևորում-պատկերը, թե «Անհունը միայն մի բառ ունի՝ սեր», գտնված բառի արժևորումը, թե «Խաչակնքող բառն ինձ ժպտաց ճանապարհի բաց խորանից», և բոլոր նրբահյուս զգացողություններն ու զգացմունքները հասնում են աղոթքի վեհության: «Ուզում են հասնել ինձ // իմ միջով // ևս մի աստիճան- // և որպես մարդ կշարունակվի // տիեզերքը // կշարունակվի // որպես մրջյուն // որպես ծառ»:

Ընդհանրապես ուշագրավ է գրողի բառազգացողությունը, ըստ այդմ էլ՝ տրամաբանական տրոհումներն ու բառաշեշտերը: Մեծ հաշվով՝ գիրքը իսկապես մի ուրույն աշխարհի մատուցվող բազում իրականություններն են անպարագիծ ու անսահման գրողի բանաստեղծական երևակայությամբ համահունչ:

Իսկ վերջում...

Դեռ որքա՞ն տողեր կային, որոնց մասին կարելի էր երկար խոսել, և որքա՞ն մտքեր, որոնց մասին պետք է լռել՝ պերճախոս, Եսայանական լռությամբ...

«Արդ թուրքն իմ ճակատն է // որին մակագրողը // ոչ ես եմ, ոչ էլ դու // այլ մեր միջև ապրող Յրեշտակը՝ հոգու», - Ռոբերտ Եսայան:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Անշուշտ, Աստուծո հետ մեր հաղթանակությունը բարեխոսված է ԳՐՈՎ, Գրի աղոթքով, այս անգամ Ռ. Եսայանի ՀՐԵՇՏԱԿԻ ԻՆԶԵՆԱԳԻՐԸ:

Ուրեմն մենք այսօր Յրեշտակաց թևատակերում զգանք մեզ՝ այս ժողովածուի հոգեթխմունքը ընդունենք՝ որպես կենարար բխում:

Ակունքը, Բառը, ոգին, հրեշտակը, տիեզերքն ու քառուրդ Եսայանի բանարվեստում գեղագիտական նշաններ են, որ ճշտում են նրա սրբազան տարածքի աշխարհագրությունը՝ Շուշին, ապա և նրա երկրորդ սրբազան տոպոսը Գյումրին, ինչպես ինքն է ասում՝ «Եթե Շուշիում չես, պիտի լինես Գյումրիում: Իսկ իմ բացակայությունը Շուշիում զգում են բարը, ծառը, ճանապարհը»:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռոբերտ Եսայանը հայ ժամանակակից քնարերգության լավագույն ներկայացուցիչներից է: Նրա գրիչը վարզում է սպիտակ թղթի անեզր դաշտերում, որտեղ անսահմանափակ տեսադաշտ կա գրի հորիզոններով: Նրա միտքը քանդում է ժամանակի կապանքները և ընթերցողին պոկելով իրականությունից՝ հրում է դեպի երազը, դեպի անհայտը հույսերի...

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Յրեշտակի ինքնագիրը» գրքի մի երեսին Շուշի, մյուսում Գյումրու ծնունդ ստեղծագործությունները կարծես նույն ապրումի ու ասելիքի հայելային արտացոլանքը լինեն, քույր քաղաքների ու եղբայրական ճակատագրերի նույնականացման բնորոշմամբ: Այս գրքում եռաչափ է հեղինակի՝ ժամանակի զգացողությունը, նա կարծես ասելիս լինի՝ կուզեմ, կապրեմ այստեղ և հիմա, չեմ ուզի՝ անցյալն ու ապագան այնպես խորունկ կզգամ, որ նրանք իրականության չափ գործող հույզերի պատճառ կլինեն: Հեղինակի և նրա ստեղծագործությունների համանմանությունը այս դեպքում ուղղակի սերտաճման տպավորություն է թողնում. նման չին փիլիսոփա Զժուան Ցգիի երագի մեկնության: Մեկ օր արթնանալով փիլիսոփան պատ-

մում է, որ երազում նա վերափոխվել էր թիթեռնիկի ու արթնանալով չի հասկանում, ո՞վ է ինքը՝ թիթեռնիկ, որն իրեն փիլիսոփա է պատկերացնում, թե՞ Չժուան Յզին է, որն իրեն թիթեռնիկ է երևակայում: Այսպիսի միաձուլումը թույլ տվեց ինձ շփոթվել՝ հիմա Ռոբերտ Եսայանի գիրքն է լույս տեսել, թե՞ Ռոբերտն ինքը ևս մեկ անգամ ծնվել է: Պոետի մետաֆորիկ զգացողությունն ստիպում էր ամեն տողի հետ ասոցիատիվ ապրումներ ունենալ, ու ինձ թվում էր, թե գրողն իր շնչառությունը բողոքում է պակասում ու այնուհետ մատնեցող պատկերագիր նախշեր անում:

Լուսինե ԱՂԱՋԱՆՅԱՆ

Բազմազան, բազմաբովանդակ ու բազմերանգ է Եսայանական մտքի թռիչքը, և այդ ամենը խտացված է նրա պոեմներում, հատկապես՝ «Չրեշտակի ինքնագիր»-ում: Բարձրակարգ գործեր, որոնք մի նոր շունչ են բերում հայ պոեզիային: Այս գործերի մասին դեռևս շատ է խոսվելու... Նրա ստեղծած պատկերներն ու բառի ուժը եթերային են և հենց՝ հրեշտակի ինքնագիր:

Մնացական ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մերը՝ իբրև «Մեր շուրթերի միջև ծաղկող ճյուղը» շարքի հիմնական մոտիվ՝ թերթ առ թերթ

բացահայտելով սիրո բոլոր դրսևորումներով, որտեղ սիրեցյալի աչքերի աղոթքից սկսվում է ճանապարհը սիրո, սիրահարված պատանու խանդավառությամբ պոետը ճաշակում է սիրո բոլոր բույրերը, հմայքները, խոլումները՝ բաղդատելով բնության հեքերի, լուսաբացի, կեսօրի, մայրամուտի և գիշերվա հետ: Մերը ամենուր է:

Օգտագործելով մեր լեզվի հսկայական զինամուցը՝ Ռոբերտ Եսայանի սիրապատումը շարունակաբար շաղախվում է պատկերային հայտնություններով, տեսանելի և աներևակայելի թռիչքներով, սիրային տաղերը իրենց մեղեդայնությամբ ձգվում են երկրից երկինք, «գրնգում են

ծաղիկների թարթիչներում, առավուտվա դողաճներում, ջրերի կարկաչում»: Չքնաղ մի տեսիլով բանաստեղծը խոստովանում է. «Մի հանգրվան է համբույրը հոգեդարձության, ակնթարթներն են վերածվում լույսի»:

Շնորհիկ ՇԱՀԻՆՅԱՆ

Չեղինակի ներսի ու դրսի անընդմեջ ըմբոստացումը, երկար ու գեղեցիկ բաղձելու հայեցումները, որքան էլ բառի սահմաններում եթերային են, ոգեղեն, միևնույն է, շոշափելի են և ունեն անուններ՝ ցավից դուրս՝ սիրո սահմաններում. հայրենի տուն, երկիր, հարազատ հող, որոնք նույնամուն են այս ամենը պաշտ-

պանողի՝ զինվորի կերպարում: Ո՞րն է Ռոբերտ Եսայանի բանաստեղծության դյուբանքը այս գրքի շրջանակում՝ բաց և շոշափորեն ազատ խոստովանությունները և ընթերցողին նվիրվող անմաղձ խնդությունը: Ուժեղ, առողջ զգացողությունների հոսքագծում հեղինակը ստիպում է թեզ հավատալ (նախ ինքն է հավատալով և զինվոր): Թեև կորցրինք մեր չքնաղ հայրենիքից, և դարձյալ ներկա է պատերազմը, այդուամենայնիվ «... գուցե մի օր հասնեն ելքին տիեզերքի, հասնեն հենց այս բառով՝ Արցախ» /Ռ. Ե./:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ



Շնորհիկ ՇԱՀԻՆՅԱՆ

ՄՈՍՈ ԿՆՈՆ


- Մա՛ն, էս դիքը ես չեմ կարող ելնել,- բողոքեցի ես:
Թեև օրը մի քանի անգամ թեյանանով Մոսո աղբրից պաղ ջուր եմ բերում հորս, բայց այս անգամ ճանապարհն այլ է:
- Ըբը Կնոյին չըտեսնա՞նք, էս աշխարհ շատ հանաք-մասխարություն կեներ, տեսնի՞նք

էնտեղ իմա՞լ է:
Մամս իր խնդուքը թաքցրեց շալի պոչերի մեջ:
-Ո՞վ էր, Մոսո Կնոն, մա՛ն:
-Չանաքչի էր: Տարիմ դոնադանցու իշուն գողցավ, բերեց գեղ, սև մրով ներկեց: Անձրև օր էլն առեցն էրուկ՝ գնաց քաղաք փուրջուլուկ ծախելու: Մինչև Ղոնադան էլն անձրևի տակ լողցավ-խստկավ: Ղոնադանա շոշի վրեն տերը ճանցցավ ուր իշուն: Կնոյի ձեռքից էլն առան, մեշուկով փուռջուլուկ դրին Կնոյի շալակ, ետ դրկին: Կնոն շատ մասխարա մարդ էր, օղորմի հոգուն:
Մոսո Կնոյի թոռներից մեկը՝ Արևը, շիվար է: Պինդ ոտուձեռը առվի պաղ ջրից կաս-կարմիր կտրած՝ լվացք է անում:
-Արև, էդ ի՞նչ ես լվանում:
- Ձեզիս բրդերն ին, աղջիկներ ջան, հարսնքիս գիկաք, օր խաղ ըսիք:
Արևի հարսանիքը շա՛տ ուշացավ, արդեն հիսուն տարեկան է Արևը:
Խորթ մայրը մահացել է, բոլորը ողբում են՝ Արևը թե.
-Չերիք է անունն իտաք,

խեղճ մեռելի երեսներ մկա կվառվին:
Քույրը՝ Շուշիկը, ամուսնացել է, շատ երեխաներ ունի, Արևը եկել է մեր տուն, մորս բողոքում է.
-Քեռեկին ջան, Շուշուն մրեն էլավ, մրջուրն ընկավ, հալալ չէ՞ ընձի, ես ու իմ էշերը, իմալ ուզիմ, էդմալ կքշիմ:
Մամս հոգնել էր, ուզեց նստել, հանգստանալ, բայց չցանկացավ Մոսո Կնոյի դռանը նստել: Չաջորդ կանգառը Մոսո Մուկուչի տունն է:
Կտուրը փլփլված, առաջ թեքված, կախված է, ասես Կինտո Վանոյի գրակը լինի հարբած ժամանակ: Կինտո Վանոն, պատերազմից հետո տարին բոլոր քեֆը լավ, սրան-նրան քարշ է տալիս կոպերատիվ.
-Չիտլերը ձեռս տարավ, էրկուսն իրան քիչ էր. ես դրա մերը...
Վանոյի աջ ձեռը, մինչև դաստակը, սև ձեռնոցի մեջ է, գրպանը չի դնում, ընդհակառակը՝ թափահարում է օդում, գլխից վերև:
Ո՞վ գիտի, Չիտլերը տեղ-

յակ է Վանոյի ձեռքից, թե չէ: Բայց Վանոն հարկ է համարում ամեն օր Չիտլերի մորը հիշեցնել իր ձեռքը:
Մանոն՝ Վանոյի կարմրերես, պինդ կնիկը, մոլորվելով Վանոյի ու Չիտլերի արանքում, մեկ չանչ է անում խմած, քնած Վանոյին, մեկ էլ անհայտ հեռուներում թաքնված Չիտլերին, որ էս սև օրը բերեց Վանոյի գլխին:
Մի խոսքով, ոչ ավել, ոչ պակաս, Չիտլերը Վանոյին ու Մանոյին պարտք է կես ձեռք ու երկու հաշմված կյանք:
Պոլիտեխնիկի նախկին ուսանող Վանոն իր մաթեմատիկայի գիտելիքների ողջ պաշարն սպառել է կոոպերատիվում՝ օղու համար կոպեկ հաշվելով:
Մոսո Մուկուչը՝ հաստ, շեշխանա բեղերը մերթնդմերթ շոյելով, ընդառաջ եկավ մամիս: Մորական կողմից ազգական է, և հաճախ երեկոները, երբ գառները հաջ-հաջ անելով գյուղամիջում բաժանում-վերջացնում է՝ տրեխները մեր դռանը թափ տալով, քթի տակ խնդմնդալով, մտնում է ներս:

-Մուկու՛չ քեռի, մեր չալ գառը չկա:
Մուկուչը, որ մորս հրավերից ոգևորված պատրաստվում է նստել արդեն զգված սեղանի մոտ, հանկարծակի է գալիս.
-Ձեք դրուկ է, արի տար:
Այս ասելով՝ շուռ է գալիս դեպի տղեկը և շինելի գրպանը լայն բաց անում:
Մենք՝ երեխեքս, փոթկացնում ենք՝ թաքնվելով պահարանի հետևում կամ մորս թիկունքում, իսկ Մուկուչը, իր բարկությունը մեղմելով, շուռ է գալիս մեզ.
-Գա՛ն ջան, մուշուրբեմ ջուր բիր:
«Գառներս» իրար ենք խառնվում, ոչ մեկը չի ուզում Մուկուչին ջուր բերել: «Մուշուրբեմ» ձեռքից ձեռք է անցնում:
Բանն այն է, որ Մուկուչի խմելուց հետո մուշուրբեմ ենթարկվելու է զանազան քսուքների ու ավազով շփումների, մինչև որ համոզվենք Մուկուչի կասկածելի մաքրության բեղերի հետքերի վերացման մեջ:



ԴԻՆՈ ԲՈՒՅԱՏԻ

ՍԻՐՈ ԴԵՍ

Չիմա, երբ նա մեկնել է, ու այլևս չի վերադառնա, անհետացել է, ջնջվել իր կյանքից, ճիշտ այնպես, ասես մեռած լինի, իրեն՝ Իրենեին, մնում է միայն զինվել ողջ քաջությամբ, որ որևէ կին կարող է խնդրել Աստուծուց և արմատախիլ անել բոլոր կապերը, որոնցով այդ տարաբախտ սերը կապվել էր իր եությանը: Ինքը միշտ ուժեղ աղջիկ է եղել, այս անգամ էլ չի թուլանա:
Ահա և վերջ: Այնքան էլ

սարսափելի չէր, որքան ինքն էր կարծում, ու պակաս երկարատև: Չորս ամիս էլ չի անցել, և ահա ինքը լրիվ ազատ է: Մի քիչ նիհարել է, ավելի գունատվել, ավելի թափանցիկ է դարձել, սակայն ավելի թեթև է զգում իրեն, ապաքինման քաղցր թուլություն է վրան իջել, որի մեջ արդեն բաբախում են նոր, աղոտ պատրանքները: Ո՛հ, ինքը կեցցե՛, հերոսուհի է, կարողացավ ինքն իր հանդեպ անողոր լինել, վճռականորեն վանեց հուշերի բոլոր շողորթությունները, որոնց տրվելն այնքան գայթակղիչ էր:

Ոչնչացնել այն ամենը, ինչ մնում էր նրանից իր մոտ, անգամ մի քորոց, այրել բոլոր նամակներն ու լուսանկարները, դուրս նետել իր հագած բոլոր շորերը, երբ նա իր կողքին էր, որոնց վրա գուցե նրա նետած հայացքները թողել էին մի անշոշափելի հետք, ձերբազատվել այն գրքերից, որ նա էլ էր կարդացել, և որոնց մասին իրենց երկուսի իմացությունը նման էր գաղտնի հանցակցության, վաճառել շանը, որն ամիջապես ճանաչում էր նրան ու վազում նրան ընդառաջ, երբ բացում էր պարտեզի դուռը. խզել կապերը բոլոր այն ընկերների հետ, որոնք ընդհանուր էին իրենց երկուսի համար էլ, մինչև անգամ փոխել տունը, քանզի այս բուխարու գոգին մի երեկո նա արմուկով հենվել էր, քանզի մի առավոտ այդ դուռը բացվեց ու հայտնվեց նա, քանզի դռան գանգը շարունակում է նույն կերպ հնչել, ինչպես այն ժամանակ, երբ նա էր գանգը տալիս, ու իրեն թվում էր՝ բոլոր սենյակների մեջ նրա

խորհրդավոր հետքերն էին:
Ու նաև վարժվել այլ բաների մասին մտածելու, նետվել մի կլանող գործի մեջ, որից հետո, երեկոյան, երբ վտանգը վերստին արթնանար գաղտագողի, անհաղթահարելի քունը իրեն զգեստներ. ճանաչել նոր մարդկանց, հաճախել նոր միջավայր, փոխել նաև մազերի գույնը: Այդ ամենն իրեն հաջողվել էր անել հուսահատ վճռականությամբ՝ չթողնելով ոչ մի բաց անկյուն, ոչ մի ճեղք, որոնցից հիշողությունը կարողանար սպրդել: Ինքն արել էր դա: Եվ... ապաքինվել:
Չիմա առավոտ է, Իրենեն զգում է առողջ, մի գեղեցիկ կապույտ զգեստով է, որ դերձակը քիչ առաջ էր ուղարկել, պատրաստվում է տնից դուրս գալու: Դրսում արև է: Նա՛ երիտասարդ, թարմ, ինչպես տասնվեց տարեկան հասակում: Երջանի՞կ: Գրեթե:
Բայց ահա հարևան տնից երաժշտության ելևէջներ են լսվում: Ինչ-որ մեկը միացրել էր ռադիոն կամ էլ գրամոֆոնը ու բաց թողել լուսամուտը:

Բաց թողել ու փակել անմիջապես:
Դա բավական եղավ: Վեց-յոթ մոտա, ոչ ավել, մի հին մեղեդու, նրա սիրած երգի... Դե՛հ, վերջ տուր, Իրենե՛, էդ ստից բանի համար չկորցնես թեզ, վազի՛ր աշխատավայրդ, կանգ մի՛ առ, ծիծաղի՛ր... Բայց մի սոսկալի դատարկություն արդեն գոյացել էր իր ներսում, անտակ մի անդունդ: Ամիսներ շարունակ, սերը՝ այդ տարօրինակ դատավճիռը, քնած էր ձևացել՝ մոլորեցնելով Իրենեին: Ու հիմա չնչին մի բան բավական եղավ, որպեսզի արթնանար վերստին:
Դրսում անցնում են մեքենաները, մարդիկ ապրում են... ոչ ոք չգիտե մի կնոջ մասին, որը, իր տան հատակին մեկնված որպես մի պատժված երեխա, փչացնելով իր նոր շրջագետը՝ արտասվում է դառնագին:
Նա հեռու է, այլևս չի վերադառնա երբեք, ամեն ինչ անօգուտ եղավ:
Իտալերենից թարգմանեց Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ



Լույսի, բարու և գեղեցիկի սերմնացան...

Կան անհատներ, որոնք, մշտապես մեր կողքին լինելով, իրենց ազնիվ, անաչառ և առաքինի էությունը են լցնում մեր առօրյան: Այդպիսի անհատ է Յուդիկ Մերկուսի Կարապետյանը՝ անմնացորդ նվիրյալը աշխարհի ամենապատվաբեր գործին՝ դպրոցայինը:

Ծնվել է 1931թ. հունիսի 10-ին աշխատավորի բազմաճյուղ ընտանիքում: Սովորել ու ավարտել է Լենինականի 3ովհ. Թու-

մանյանի անվան թիվ 13 միջնակարգ դպրոցը: Ունենալով մեծ սեր մայրենի լեզվի և գրականության նկատմամբ՝ նույն տարում ընդունվել է Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Բուհն ավարտելուց հետո աշխատանքի է անցել երեկոյան /բաներիտ/ դպրոցում: Գնահատելով նորավարտ ուսուցչուհու սերն ու նվիրվածությունը իր աշխատանքին՝ 33 կրթության նախարարի հրամանով նրան տեղափոխվում են քաղաքի լավագույն թիվ 6 միջնակարգ դպրոց, որտեղ դասավանդելուց զուգընթաց ղեկավարել է հայոց լեզվի և գրականության մեթոդ-միավոր-

ման աշխատանքները, մասնակցել ծնողական կոմիտեի աշխատանքներին, երկար տարիներ զբաղեցրել է դպրոցի փոխտնօրենի պաշտոնը, որպես լավագույն մասնագետ՝ հրավիրվել է մասնակցելու տարբեր բուհերում «Հայոց լեզու» առարկայից անցկացվող ընդունելության քննություններին:


Ամբասիր աշխատանքի համար ուսուցչուհին արժանացել է կառավարական պարգևների և պատվոգրերի:

2003-2021թթ. աշխատել է Գյումրու պետական բժշկական քոլեջում՝ որպես հայոց լեզվի դասախոս: Իր աշխատանքային գործունեության 70 երկար ու ծիգ

տարիների ընթացքում ուսուցչի կոչմանը հավատարիմ մնալով է բազում սերունդների հետ աշխատելու արդար իրավունքը. եղել է շրջահայաց, գնահատող մարդ, անդավաճան մայր և օրինակելի կին:

Ժամանակի ժամը բեռն ուսած քայլում է արտաքուստ հանգիստ, ներքուստ՝ մշտաժող և հպարտ: Համակողմանի զարգացած անձնավորություն, որի համար մարդ լինելու արվեստը վեր է ամեն ինչից:

Գյումրու պետական բժշկական քոլեջ



Վալերի ԱՆԱՆԻԿՅԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐ ՀՈՒՇ

Լույսի հեղեղ, Լույսի մշուշ, Խելագար մղում ու խեղդող տեմո...

Արևից արբած մի ճերմակ մտույզ թռչում էր որպես մի փետուրե նետ:

Ոսկե կալի մեջ՝ սահող արծաթ կամ, Ասես նավակ էր կալ-լճում լուսեղ, Կամին աղջիկ կար՝ մագերը սև-սաթ, Բոբիկ ոտքերին՝ ցորենի մղեղ: Վարդում էր թեթև ծին՝ ճերմակ կարապ, Դեղին շղարշ էր մրրկում քամին, Ալեկոծ կալը դարձել էր կրակ, Կրակում պարող ցորենոտ մարմին:

Պարող երազ ու հացի արարում, Հրավառ մի դեմք, որ վաղուց չկա, Լոկ իմ հոգում է թախտոտ ղողանջում Ջանգակ ծիծաղը ցնորք աղջկա:

Ինքնակարգ՝ Վ.Անանիկյանի

ԱՇՆԱՆԱՍՈՒՏ

Էլ ո՛չ կախարդանք, ո՛չ ոգեշնչում Հարություն չեն տա այս մոխրներից...

Երկնքով անցնող կռուկների չուն Աշունացած գարունն է տանում թևերին:

Արեգակի մեջ էլ կրակ չկա, Խոտերը տափանվել, դարձել են մրմուռ,

Օրը նման է լացող աղջկա, Թաց խարույկներ են մասերնի, մամուռ:

Աշուն երկնքի բիբերում ճերմակ Շրջանակվել է մի պաղ տխրություն,

Մշուշի փափուկ փետուրների տակ Ցավը ցավի վրա դառնում է ծյուն:

ՀԱՅՈՒՅԻ

Արևագալը՝ պերճ վառվող վարդաբույլ, Բացվող աղջիկ է անհունը լուսե, Դու կուժը ուսիդ գնացիր աղբյուր, Ծամերդ՝ սև-սաթ քառասուն

հյուսքեր: Քայլեցիր ... ասես լույսը Լույսի մեջ, Խոտ ու ծաղկունքից ոտքերդ ցողաթաց, Տաք ծյուն էր թվում լանջող կիսամերկ, Մեջքդ հոլանի, դեմքդ կիսաստված: Երբ կուժը լցրած սարի պաղ ջրով Իջար քարափից նագանքով թո հեզ, Արևն էր գզվել թեզ իր բոցերով, Դու՛ սարից իջնող հրդեհ իմ անտես:

ՄԱՅՐԻԿԻՍ

Երբ որ ձնահալ դաշտերից Անհուն կարոտս առա, Որպես նվեր մայրիկիս Ձնծաղիկներ տուն տարա:

Մայրս տեսավ ու ժպտաց Այնպե՛ս քնքուշ, այնպե՛ս խեղճ, Նրա ժպիտն ինձ թվաց Բացված ծաղիկ ծյունի մեջ:

ԾՆՆԴԱՎԱՅՐ

Արևի միջով երկարող ճանապարհը Ինձ տանում էր լեռներ, Որի քարեղեն թևերին Իմ տունն է եղել՝

Կապույտ տանիքով, Մանուշակագույն պատերով, Կանաչ հատակով:

Իմ դուռը ամպերի դեմ էր բացվում, Իմ պատուհանը Լույսի:

Իմ տան շուրջը դրախտային այգին էր, Այգում՝ սրնգահար աղբյուրը: Թռչունների երգի մեջ

Ծաղկում էր իմ այգին: Աղբյուրից ջուր էին խմում Թևակոր ձիերը:

Արտի միջով երկարող ճանապարհը Ինձ տանում էր երկինք,

Երկնքում լեռներն են, Լեռներում՝ իմ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ:



Պատվական ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՍ՝ ՓՈՍՏԱՏԱՐ

Ձյունը ճռճացնելով հասա կանգառ, տրոլեյբուսը շարժվեց: Ուրեմն մի քանի րոպե պետք է սպասեի: Է, ինչ կարող էի անել, պիտի սպասեի:

Մութն ընկել էր: Դիմացի շենքի երեք հարկի պատուհաններն էլ դեղնավուն էին: Տեղ-տեղ դեղինների մեջ շապիկավոր կերպարանքներ էին երևում: Այդ շենքը զինվորական հոսպիտալն էր: Երկրորդ հարկի նախավերջին պատուհանի մոտ կանգնած զինվորը ապակու ամբողջ մակերեսի վրա մի տառ էր գրում, հետո՝ մեկ ուրիշը, հետո՝ ուրիշը...

Ես ուշադրությամբ հետևեցի: Նա գրեց ԻՍԱ... Չգիտեմ՝ էլ ուրիշ տառ գրեց, թե ոչ, որովհետև մոտիկից անցնող մեքենան մի պահ վարագուրեց պատուհանը: Չգացի, որ զինվորականը մե-

կի հետ խոսում էր ձեռքով, գրելով...

Բայց ո՞ւմ... Դարձա: Փողոցի մյուս կողմում զինվորական հոսպիտալի ուղիղ դիմաց, աղջիկների հանրակացարանն էր: Երկրորդ հարկում իմ գլխավերևում, մի աղջիկ ժպտում ու

ասես պատասխան էր գրում... Մի ուրիշ պատուհանում կանգնած զինվորականը ցուցամատը սեղմեց կրծքին ու տառ-տառ գրեց՝ Ս-Ա-Ր-Ս-Ո-Վ: Ես այսպես հասկացա, որ նա Սարատովից էր: Աղջիկն էլ էր ճիշտ հասկացել, ժպտում էր...

Տրոլեյբուսը եկավ: Պետք է բարձրանայի, բայց հիվանդանոցի բաց պատուհանից ինչ-որ բան կախվեց ցած: Հետաքրքրություն չթողեց տրոլեյբուս բարձրանալ:

Բաց պատուհանից գլուխը դուրս հանած զինվորը ինչ-որ բան ասաց անցնող մի տղայի: Անցորդը վերև նայեց, լսեց, հետո ձեռքը թափ տվեց ու հեռացավ: Ես արագ մոտեցա զինվորականի «փոստարկղին»: Դա մի «Կազբեկ» ծխախոտի դատարկ տուփ էր, չորս կողմից թելով կապված լծակավոր կշեռքի նժարի պես: Վերև նայեցի: Շապիկավոր երիտասարդը ինչ-որ բան ասաց: Չլսվեց՝ գուցե շշուկով ասելու պատճառով: Ես նորից հարցրի՝ ի՞նչ...

Նա այս անգամ ձեռքով հասկացրեց, որ վերցնեմ թուղթը, կարդամ: Ես տուփի միջից վերցրի ծաված թուղթը և մեծ-մեծ տառերով գրվածը՝ հասցեն, կարդացի. «Դիմացի շենք, երկրորդ հարկ,

աջ կողմից երկրորդ պատուհան, կանաչ խալաթով աղջկան»:

Ինձ շատ հետաքրքրեց բովանդակությունը: Չնայած գիտեի, որ նա հասցեի համար ասած կլինի՝ կարդա: Բայց ես, իբրև թե չեմ հասկացել, բացեցի թուղթը. «Լարիսա (այսպես հասկացա թո անունը), վաղը ինձ պետք է վիրահատեն: Հասարակ բան է, չեմ վախենում: Ապակու վրա գրեցի անունս, չգիտեմ՝ պարզ կարդա՞ցի՞ր Կոլյա: Կրասնոդարից եմ: Շուտով 22 տարեկան կլինեն: Ամենակարևորը՝ ամուսնացած չեմ: Դո՛ւք...», և էլ չկարդացի, պարզ էր: Ժպտացի ու վերև նայեցի: Չհիմնական էլ ժպտաց ու ձեռքով ցույց տվեց դիմացի շենքը՝ հանրակացարանը: Ես շտապեցի:

Մի աղջիկ ներս էր մտնում: Խնդրեցի, որ նամակը հանձնի հասցեով:

Շեկվիկը կարդաց հասցեն, ժպտաց ու ներս վազեց: Ես մոտեցա կանգառին հայացքս չհեռացնելով հասցեագրված պատուհանից: Անհանգիստ էի. «Արդյոք տեղ հասա՞մ, թե՞ ոչ»: Ահա այդ պատուհանի մոտ երևաց կանաչ խալաթով աղջիկը և, թղթի մի կտոր ցույց տալով, ժպտաց...

Ես այդ օրը պետք է ներկայացնեմ գնայի: Արդեն ուշացել էի:

ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍՈՒՏԸ

Բակում փոշի է բարձրացել: Մեկը ավլում է, մյուսը բահով

իրար վրա է հավաքում աղբը: Բոլորն էլ հետևում են, թե ո՞վ է գալիս, ո՞վ չկա...

-Մարտիրոսը չկա:
-Մարտիրոսը չկա:
Եվ այսպես՝ բերանից բերան:

-Մարտիրոսը եկավ,- գործը թողած ծայնեցին բակեցիները:

Մարտիրոսն անծայն վերցրեց բահը, քերեց աղբը, լցրեց մեծ դուլերի մեջ, տարավ բակից դուրս, դատարկեց աղբարկղում ու դանդաղ ետ եկավ...

Մարտիրոսը աչքի տակով հետևում էր Մարտիրոսին:

Մարտիրոսը քրտնել է: Նա հագել է տաք կիսավերարկու, որի տակից երևում է կրծքին փաթաթած շալը:

Ոչ ոքի չի նայում Մարտիրոսը: Նա գլուխը կախ՝ աղբը լցնում է դուլերի մեջ ու տանում: Չորրորդ անգամ կեսճանապարհին կանգ առավ, դուլերը ներքև դրեց, խոր շունչ քաշեց, հազաց... Նստեց դուլի վրա:

-Սուտ հիվանդը սկսեց: Դեռ չէկած փախչել է ուզում, - հաղորդեցին մեկը մյուսին:

- Հորեղբոր տղայի հարսանիքին էլ չի գնում, թե հիվանդ է,- ծիծաղեց կանանցից մեկը:

Մարտիրոսը դուլի վրայից ելավ, թևով սրբեց քրտինքը, մի պահ այդպես մնաց, հետո անխոս հեռացավ:

-Գնաց,- փսփսացին:
-Փախավ,-գոռացին բակով մեկ:

Մարտիրոսը դեռ դուռը չէր բացել, երբ կինը զայրացավ:

-Սուտ հիվանդ ձևացար, փախա՛ր:

Չպատասխանեց: Գնաց մտավ մնջասենյակը:

-Կեղտոտ շորերո՞վ...,- գոռաց կինը:

Դուրս եկավ սենյակից, մտավ պատշգամբ, հանեց կիսավերարկուն, դրեց մի կողմ ու պառկեց թախտին:

- Ես գնում եմ հիվանդանոց,- միջանցքից ծայնեց կինը, գիտեմ, որ ախ ու վախը պիտի սկսես, որ չգաս... Երբորս թո՞ռի՝ Սամսոնիկի ոտքի եղունգներից մեկը պետք է քաշեն, զանգեցին...

- Օ՛Ֆ...- շնչեց Մարտիրոսը: Կինը դուռը շրխկացրեց:

Մարտիրոսի փեսան սեղմեց գանգի կոճակը:

- Երկար սեղմիր, որ իմանա: - Ալարում է...

Մարտիրոսի կինը բանալիով բացեց դուռը ու զայրացած գնաց դեպի պատշգամբ:

Բոլորը հետևեցին նրան: - Քնած է,- դեռ հեռվից ծայնեց փեսան:

- Սուտ քուն,- ծիծաղում են:
- Հիմա կարթնանա ու կսկսի՞ օ՛Ֆ, օ՛Ֆ...

- Մարտիրո՞ս...
- Չայն չի տալիս:

- Մի սպասիր, տեսնեն: Մարտիրոսի կինը առաջ անցավ, կռացավ ամուսնու վրա. շունչ չկա:

- Շուները պահում է:
-Մարտիրո՞ս,- ծայնում են կամաց:
- Մարտիրո՞ս,- ծայնում են ուժեղ:
- Մարտիրո՞ս, - գոռում են:
- Մարտիրո՞ս...

ԱՐԵՎԱՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ ԱՄՆ / ԵՐԵՒԱՆ

ԽԵՆԹԵՐՍ

Բառեր կան մեջս խուժանների բառի կը ժայթքին չորս դիս խելար ու վայրի ինչպես բզզացող պիծակներ կատղած կայան տենչացող տեղահան բառեր

Չայներ կան մեջս ալիքներ ծայրի կողողեն գանկս ողջ էութիւնս խլացնող կիրքով անձնագիր կուզեն շփոթ աչքերես յոգնած աչքերես

Յոյգեր կան մեջս գնացքներ յոյգի կը սուրան վայրագ անողոք, դաժան անգուսպ կորով կը հարցաքննեն խղճմտանքս խռով խղճմտանքս մունջ

Բուռն կռիւներ կան

Հանդեսներ վեճի ձայներն ու յոյգերն ու բառերն այդ խենթ կարծակեն կայծեր բոցեր ամեհի ու կը հրկիզեն գիշերն ցնորքի

ՏԻԳՐԱՆ ԳԱՐՈՅԵԱՆ ՏՈՒՊԱՅ / ԵՐԵՒԱՆ

ԿԱՐՕՏ / ՆՈՐ/

Կարօտը իր մարմինը կը յանձնէ, ինձի է՞ր, չեն գիտեր, գիտեն միայն, որ իր մարմինը կը յանձնէ, տեսական է՞ր, չեն գիտեր, գիտեն միայն, որ իր մարմինը կը յանձնէ:

Ո՞ւր էր, այժմ կը լռեն, արդէն ինքը՝ կարօտը կ'ըսէ՝ -մարմինս ձեզի կը յանձնեմ, ներեցէք ինձի վերքերուն սիրոյն:

ՓԱՆՈՍ ԵՐԱՆԵԱՆ ՄՈՆՐԵԱԼ-ԳԱՆԱՏԱ

ԱՄԵՆԱԾԱՆՕԹԸ

Իմ սիրածին ծաղկանց մէջէն ամենածանօթը ինձի՝ կարմիր վարդն է իր փուշով. ու ծաղիկը՝ ապրիմ-մեռնիմ իր թաւալող տերեւով...

(Թրթիւներ)

ՄԱՍԻՍ ԼԵՌԸ

Օրը տակաւ կը մթագնի... անցնելիւն, Հայաստանի դէմքը տեսած Մասիս լեռն է՝ բոսորագոյն ամպերէ վեր Իր տեսածը Վկայելու Կը մագլցի ...

ՍԵՒԱՆ ՀԱՆԵՇԵԱՆ ՊԵՏՈՒՐԵԱՆ ՔԱԼԻՖՈՐՆԻԱ-ԱՄՆ

ԱՆԻ

Երագներու մէջ հիւսուած ճրագարան, ո՞ւր է ճրագը, այն որ պիտի ջերմացնէր սիրտն ու հրդեհէր հոգին:

Այսօր եկայ մօտը, եկայ ճրագը որոնելու, Հազար ու մէկ ճրագ: Անի...Անի... Անի... Փլատակ էութեանդ ընդմէջէն կրկնուող համանուագ, Անի... Մեր էութիւնն ալ փլատակ, բայց խաչը քանդակուած:

«Տէ՛ր ողորմեա», լուռ կը լսենք, «Ազգիս հայոց սէր միութիւն», լուռ կերպէնք, կը լսենք... Կրկնուող համանուագ: ճրագը, Անի՛, պիտի վառեն ու միշտ վառուած պիտի պահեն:

Նոյն պահուն ձայն մը որդղեց էութիւնս... -Ո՞վ էս դուն: -Ես ազգ մըն եմ, որ իր հոգւոյն պատկերով քեզ կառուցեց: -Յետո՞յ... լքե՛ց:

-Ո՛չ, չլռեց: -Ինչո՞ւ պատմութենէն կը փախչիս, թէ չես լքած, հապա ո՞ւր ես հիմա: -Եկած եմ մտ մը վառելու: -Մտն եւ ոչ ճրագ: -Եկած եմ «Տէ՛ր ողորմեա» երգելու: -Բայց ոչ միշտ պատարագելու: -Եկած եմ քեզ այցելելու: -Բայց ոչ վերակառուցելու... Չայնն անհետացաւ, Հայեացքս դէպի արեւելք ուղղուեցաւ, Ախուրեանն էր, Անիին աղի Ախուրեանը... Տէ՛ր, ողորմեա՛, մեզ ողորմեա՛, Անին ողորմեա՛:

Արեգակին շողերը օծած էին Մայր եկեղեցին, անբացատրելի՛ պերճանք, Անուշ հով մը փչեց արեւելքէն Անի... Հայաստան... Գարուն է դիւթական վերածաղկեալ Անիին Հայաստանի իշխանուհին:

Նոյեմբեր 30-ին Գյումրիում տեղի ունեցավ Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի նոր ցուցադրության բացումը: Ցուցանմուշների և ցուցադրության փոփոխությունը կատարվել է ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային ծրագրով՝ 2 միլիոն 300 հազար դրամի շրջանակում, իսկ կուսնետիկ վերանորոգման աշխատանքները՝ Գյումրու համայնքային բյուջեով, որը կազմել է 700 հազար դրամ: Հանդիսավոր միջոցառումից առաջ մամուլի ասուլիսով հանդես եկան Գյումրու քաղաքապետարանի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Թովմասյանը, թանգարանի տնօրեն Կարինե Վիրաբյանն ու նկարիչ դիզայներներ, ծրագրի համարողներ Կարեն Բարսեղյանը (նա «Մարիամ և Երանուհի Ալամազյան քույրերի պատկերասրահի» տնօրենն է՝ հեղ.) ու Արտուշ Կոչտոյանը: Լիլիթ Թովմասյանն իր խոսքում նշեց, որ այս թանգարանում վերջին անգամ ցուցադրության փոփոխություն տեղի էր ունեցել 20 տարի առաջ: Մինչդեռ, ըստ բանախոսի, եթե խոսում ենք մշակութային քաղաքի զարգացման և զբոսաշրջային կենտրոն դարձնելու մասին, պիտի ունենանք ժամանակի պահանջներին համապատասխան թանգարաններ՝ ներմուծելով աուդիովիզիոն ցուցադրություններ, դիմելով նորարարական լուծումների և հստակ իմաստալուծ, թե նորոյն այցելուին ինչն է հետաքրքրի այս դարում: Ըստ այդմ էլ պիտի ստեղծվի նոր ցուցադրությունը:

«Ի՞նչ է արվել. փոխվել է գրողի գրական-ստեղծագործական

ժառանգությունը ներկայացնող 4 սրահների ամբողջ ցուցադրությունը: Այն հագեցվել է եզակի մշակակութային ցուցանմուշներով, անցկացվել է կետային լուսավորություն, ավելացվել են մեծադիր պաստառներ, կատարվել է հսկայական տպագրական աշխատանք: Առաջին սրահում կարող եք տեսնել նաև կենսագրությունների պատճեն տպագրված, որը բուրդովին նոր ֆորմատ է՝ որպես այդպիսին: Գյումրիում կա միայն «Ալամազյան քույրերի պատկերասրահում», հանրապետությունում մեկ-երկու տեղ էլ կարող ենք հանդիպել, բայց շատ ընդունված է ժամանակակից չափորոշիչների իմաստով, հագեցած է թանգարանը աուդիովիզիոն տեսանյութերով և սարքավորումներով: Հնարավորություն կլինի այստեղ տեսնելու բացառիկ արխիվային կադրեր Առաջին ալիքի արխիվից դուրս բերված, լսելու Իսահակյանի ձայնը, ունենալու նաև ձայնային ինտերակտիվներ: Ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել Հայաստանի երկու լավագույն ձայններից Բաբկեր Չոբանյանին և Նարինե Գրիգորյանին, ովքեր առանց վարանելու կարողացել են Ավետիք Իսահակյանի և Շուշանիկ Մատակյանի փոխադարձ նամակագրությունը և այդ ձայնային ինտերակտիվները նվիրել թանգարանին», -ասաց Լիլիթ Թովմասյանը:

Նա նշեց, որ Գյումրու Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը ձեռք է բերել գրականության մեջ մինչ այժմ անհայտ համարվող Շուշանիկ Մատակյանի նամակ Ավետիք Իսահակյանին: Բոլոր դասագրքերում,

ըստ նրա, գրված է, որ Ավետիք Իսահակյանի նամակը Շուշանիկին պահպանվում է, բայց հակառակը չկա: «Հանդիպում են մի խումբ գյումրեցիներ, այն տեղի է ունենում Ավետիք Իսահակյանի Երևան տուն-թանգարանում, որտեղ ներկա էր նաև Ավիկ Իսահակյանը: Այս ողջ գործընթացի մեջ մշտապես կապի մեջ ենք եղել վարպետի թոռան հետ, որպեսզի հասկանանք՝ ինչն էր իր սրտով, ինչի վրա է ինքը ուշադրություն դարձնում և ամեն ինչ ճիշտ դասավորվի: Երբ մեր մտահոգություններն արտահայտեցինք, որ նոր ցուցանմուշ ենք ուզում, բայց չգիտենք՝ ինչպես շարժվել, թոռն ասաց, որ իմ հոգին խորն է և մեզ կարող է նվիրել Շուշանիկ Մատակյանի նամակը, ինչին առաջին պահին մի փոքր դժվարությամբ էինք հավատում, բայց ինչպես ասում են՝ ասաց և արեց: Հիմա թանգարանում է այդ նամակը, կարող եք տեսնել և կարող եք լսել նաև այդ նամակը», -ասաց Լիլիթ Թովմասյանը: Ըստ բանախոսի, սրանով գրականության և իսահակյանագիտության մեջ փոխվում է մի կարևոր շեշտադրում: Ցուցանմուշների մեջ ավելացվել են վարպետի ձեռագիր նամակները Ձաբել Եսայանին, Արշակ Չոբանյանին, Հովհաննես Շիրազին, կան նաև հակադարձ նամակները: Լիլիթ Թովմասյանի ասելով, դրանք նոր գիտական նյութ են այս թանգարանի աշխատակիցների համար, ձեռք են բերել Գրականության և արվեստի թանգարանից: Հովանավորները պլանշետներ են նվիրել թանգարանին, որոնց մեջ արխիվացված են Հանրային հեռուստաընկերության ոսկե

ֆոնդից դուրս բերված ամբողջ նյութը, որը վերաբերվում է Ավետիք Իսահակյանին, կարող են վարպետն է: Սա ևս, ըստ քաղաքապետարանի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի, եզակի է, յուրաքանչյուր այցելու կարող է մոտենալ սարքին, պոպոտել, գտնել, հարստացնել իր գիտելիքներն այն ուղղությամբ, որը նախընտրում է: Նորություն է նաև այն, որ արտերկրյա այցելուները, որոնք մեծ թիվ են ազնում, կարող են լսել վարպետի բանաստեղծությունները իրենց լեզվով: Ըստ Լիլիթ Թովմասյանի, իրենք գտել են լեզվագիրների, որոնք թարգմանել են բանաստեղծությունները ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով: Նա նշեց, որ մտադիր են ունենալ թանգարանի կայքը: Բանախոսը նաև ասաց, որ թանգարանում կատարված նորույթը սրանով չի ավարտվի, ամեն ինչ կանեն, որ թանգարանները լինեն շնչող: Թանգարանի տնօրեն Կարինե Վիրաբյանն էլ վստահեցրեց, որ այցելուների թիվն էլ ավելի կշատանա, քանի որ ցուցադրությունները հրաշալի են ստացվել: Նա այս փոփոխությունները համարեց վարպետին արժանի: Կարինե Վիրաբյանը հատկապես կարևորեց կենսագրական քարտեզը, որտեղ վարպետի կենսագրության կարևոր շրջաններն են ներառված, և այն թյուր կարծիքը, թե նա դժվար պահին լքել է հայրենիքը, կփարատվի, հստակ կարող են տեսնել, թե որտեղ է եղել և ինչ կյանքով ապրել:

Նույն ԱՐԵՎԱՄՏԱՆ Աղբյուրը <https://www.aravot.am/>



Ավետիք Իսահակյանի շնչող ու խոսող թանգարանը Գյումրիում



Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղը: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլտորադո Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 1 տպագրական մանուկ